**Հավելված N 1**
**« ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/66 »* ծածկագրով**
**Էլեկտրոնային աճուրդի հրավերի**

# ԴԻՄՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*
## Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու

Յունիքիմ ՍՊԸ-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ-ի կողմից « ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/66 » ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) թիվ 3 չափաբաժնին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Յունիքիմ ՍՊԸ-ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է Հայաստանի հանրապետության ռեզիդենտ:
Յունիքիմ ՍՊԸ-ի՝

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 02242529:
- բանկային հաշվեհամարն է՝ 2050022417141001:
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ info@unichemllc.com:
- գործունեության հասցեն է՝ ք. Երևան, Արտաշատի խճուղի 11:
- հեռախոսահամարն է՝ +374 43 49 77 99/+374 11 48 77 99:
- ռուսերեն լեզվով անվանումն է՝ ООО Юнихим:

Սույնով Յունիքիմ ՍՊԸ - ն հայտարարում և հավաստում է, որ՝
1) Յունիքիմ ՍՊԸ - ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են « ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/66 »* ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և Յունիքիմ ՍՊԸ - ն պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում
.
2) ընթացակարգին մասնակցելու շրջանակում ՝

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու անբարեխիղճ մրցակցություն ,գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,
- բացակայում է հրավերով սահմանված՝ Յունիքիմ ՍՊԸ-ին փոխկապակցված անձանց և (կամ) Յունիքիմ ՍՊԸ-ի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս Յունիքիմ ՍՊԸ-ին պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:
- ստորև ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տասը տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ)** և հավաստում, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավաստի տեղեկություններ:

| N | Անունը Ազգանունը Հայրանունը | ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսվածանձը հաստատող փաստաթղթի | Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրիօրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը |
|---|---|---|---|

| | | | |
|---|---|---|---|
| | | տեսակը և համարը | |
| 1 | | | |

3) ապահովված է դիմում-հայտարարությունը ներկայացնելուց հետո էլեկտրոնային աճուրդի համակարգի կողմից տրամադրված եզակի ծածկագրի (PIN կոդը) անվտանգությունն ու գաղտնիությունը և դրա օգտագործմամբ էլեկտրոնային աճուրդի համակարգում ընթացակարգին մասնակցելուց բխող ցանկացած գործողություն կատարվում է համապատասխան լիազորություն ունեցող անձի կողմից:

Յունիքիմ ՍՊԸ կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացվում է՝ համակարգի միջոցով:

Յունիքիմ ՍՊԸ (Վրեժ Օհանյան )

(Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, ղեկավարի անուն ազգանունը))

Ստորագրող

ՎՐԵԺ ՕՀԱՆՅԱՆ

2901640468

2025-09-12 09:44:24 GMT+04:00

Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից